

ՀԱՅՈՒՆԻ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՏԱՌ-  
ԹՈՒՐՔԵՐԵՆ  
ԳՐՎԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵ



Նվիրում եմ սիրելի ծնողներին՝  
կյանքից վաղաժամ հեռացած  
**ԱՎԵՏԻՍ ԽԱՉԱՏՈՒՐԻ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ և**  
**ՆԱԶԻԿ ԿԱՐԱՊԵՏԻ ԱՎԱԳՅԱՆԻ**  
զերմ հիշատակին

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

	Դ - Ռ	Տ - Ձ Ռ - Ջ
(4)	Ռ - Ջ	Ռ - Ջ Ռ - Ջ
	Ա - Ջ	Ա - Ջ
	Ջ - Ա	Ջ - Ա
	Ա - Ջ	Ա - Ջ
	Ջ - Ա	Ջ - Ա
	Դ - Ջ	Դ - Ջ
	Ջ - Դ	Ջ - Դ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅՖԻՃԻ - 2001

Վեհականաց բարեկանության մասին պահանջում  
և պարզության մասին պահանջում

ՀԱՅԵՐԵՆ ԱՅՐՈՒԹԵՆԻ ՏԱՄԱԴՐՁՈՒՄԸ ԹՈՒՐՖԵՐԵՆ  
ԱՐԵՎԱՏԱԿԱՅԵՐԵՆԻ ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԻՄՆ ՎՐԱ

ա - ս	մ - մ	վորոնի վերից վերից
թ - թ	յ - յ, հ**	իւ - ն կամ նուլու կամ նուլու
զ - զ	ն - ն	եռ - օ
դ - տ	շ - ֆ	եռ - օ
ի - յ, չ*	ն - ն, օ	Ենթադրյալ կողք
գ - չ	չ - չ	
է - է	ալ - բ	
ը - ի	զ - ս	
թ - տ	ռ - ր	
ժ - չ	ս - ս	
ի - ի	վ - վ	
լ - լ	ւն - դ	
յւ - հ (կ հ)	ր - ր	
օ - (ձ չ)	ց - տս, (ս)	
կ - գ	մ - ս	
հ - հ	փ - ր	
ձ - (տս)	ը - կ	
դ - դ	օ - օ	
Շ - Շ	ֆ - ֆ	
Ծ - Ծ		

\* Տայնակերծ առաջ կարդացվում է յ, նույնականից առաջ ը.


\*\* Բառակերտ հ, նույնական պարզեցված չ.

Հ. Ա. ԱՏԵՓԱՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆ ԹՈՒՐՔԵՐԵՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

(Աղյուրագիտական հետազոտություն)

A/II  
9/278



ԵՐԵՎԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ - 2001

287-943 (479.25)

QJW-63.3 (24)

□ 430

**ԱԱՏՈՒՐ ԺԵԼՑՎԱԿԻՆ  
Սամել Պետրոսյան**

Գիրքը լուսաբառված է 44 ԱՆ

Արևելագիւղության ինստիտուտի  
գիտաբարերության որոշմանը

USB@IRL.SIN.US

Ա 420 ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹՈՒՐԳԵՐԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ. ԵՊՀ  
Եր.: Երևան համայնք, Երևան, 2001, 272 էջ:

Գերա և մայուսնա թշրիկների ձևավոր (14-19-րդ դար) և տարածք շրջանների (1727-1968թ) լուսավարչության համար և՛ն գարել հայաստանական թագավորական գլուխավատական գրականություն, կոմունիզմանը պատճենա, Փիդիադական երգեր, Ըստակառական գումարներ և գլուխավատական օգբեր, նախական բարեկամիկ թագավորական գլուխավատական եղբայրացմանների համար բարորդին համարական գրականությունը:

Избраният на 13 мартарският югоизточният избирателен окръг  
външно-териториални избирателни списъци, към които са включени  
всички избиратели в избирателните списъци на избирателните  
окръзи и избирателните списъци на избирателните окръзи във  
всички избирателни списъци на избирателните окръзи във  
всички избирателни списъци на избирателните окръзи във

Գլուխ օգտագործության մեջ է մասմագլուխությունը և բնիքայությունը ուղարկված շերտը:

U ~~4603020000~~ 2001

940-63.3 (24)

## ԱՊԱԶԱՐԱՆ

Հայատառ բռնքերին գրականությունը և այլ մշակույթի անքակտելի մասն է կազմում: Այն արդյունք է Օսմանյան կայսրության տիրապետության տակ գտնվող արևմտահայության սոցիալական, հասարակական-քաղաքական իրավիճակի:

Ավելի քան 500 տարի հայերն ապրել են բռնքական տիրապետության տակ: Սա սովորական հայատակություն չի եղել, այլ կրոնական ուղղուամհության մողութով տարփած սազմա-ֆեոդալական իշխանության տևական ու ահավոր ճեղում մշակույթյին խոր անցյալ ունեցող մի ժողովրդի վրա: Թուրք տիրապետողները ոչ միայն վերցրել են հայ ժողովրդի ստեղծած նյուրական բարիքները, երա փեղիկական աշխատանքի արդյունքում, այլև ամեն կերպ աշխատել են ոչնչացնել կամ յորացնել նրա մտավոր ստուդագործության արգասիքների, ձուլել ու մահմելուականացնել հայատակ ժողովությներին: Հայատառ բռնքերին գրականությունը ծնունդ է առել որպես ինքնապահանձնան ու ուժացնան դեմ պարզաբի միջոց: Խորապես ազգային այս երկույթն իր գարգացման ու գոյության ավելի քան վեց հարյուրամյակներում վերածել է մշակույթի մի այնպիսի հզոր, բազմաժանր ու իմրենույն ճյուղի, որը ոչ միայն արդարացրել է իր նախնական առարկությունը, այլև վերածել ավելի լայն գործոնի ծառայել Օսմանյան կայսրության մեջ ապրող այլ ազգերի և ս, իր մասն ունենալով այդ ժողովությների զարգացման, լուսավորության գործում: Հայ մշակույթի պատմության մեջ, ինչպես նաև Օսմանյան կայսրության ժողովուրդների մշակության կյանքում հայատառ բռնքերնի ունեցած ավանդի ուսումնականությանը և նվիրված առյու աշխատաւությունը:

Ըստ ժողովուրդներ և ազգեր կամ, որոնք իրենց գրականությունը ստեղծել են միաժամանակ երկու լեզվով՝ սեփական ու օտար, և կամ էլ օտար լեզուներով: Այսպես օրինակ, 9-13-րդ դարերում պարսիկ մատնագիրները հսկայական գրականություն են ստեղծել ինչպես պարսիկներն, այնպես էլ արաբերներ լեզուներով: Պարսիկներ լեզվով Հնդկաստանում ստեղծվել է մատնագրական հարուստ ժառանգություն: Արաբերներ որպես գիտության լեզու ծառայել է միջնայարյան

Աղևների շատ ժողովուրդների՝ ինչպես լատիներնեն է ծառայել Եվրոպայի ժողովուրդներին: Տասնյակ ժողովուրդներ ստեղծագործել ու շարունակում են ստեղծագործել օտար լեզուներով՝ ֆրանսերն, անգլիերն, խոպաներն, սլովուգալիերն, խուղերն և դրանցից յուրաքանչյուրն ամի՞ իր ազգային դրոշն ու նկարագիրը: Հարկ է Եղի, որ ի թիվս հայերն ու հայատառ բոլորներն գրականության, գյուրքուն են ունեցել հայատառ դաշտակիրներն, արաքերն, բրդերն և այլ հայատառ գրականություններ, որոնք հիմնականում գորկ լինելով սոցիալ-քաղաքական հիմքերից, իրականում գործնական խոշոր դեր չեն կատարել:

Գայլով հայատառ բոլորն գրականությանց ապա նրան համառն է շեշտված նայ ազգային նկարագիրը: Հայ ժողովուրդը վեր եիշաւակված լեզուներով ստեղծագործած որոշ ժողովուրդներից տարբերվում է նրանով, որ հայատառ բոլորն գրականությունը չի հաճարվում նայ ժողովուրդի հիմնական, առավել ևս նայ ժողովուրդի մասվոր զարգացման գրական նիակ արտահայտությունը: Հայատառ բոլորները ատեղձել է հայերի կողմից որպես հայուրդակցության միջոց ոչ միայն հայերն այնացողների, այլ նաև մասամբ հայերնեմին տիրապետողների հևմար: Հայատառ բոլորն գրականության սկզբնավորման ու զարգացման նըրացել է բոլ նայ գրականությանը զուգահեռ և եղից պայմանագրությած չի եղել նայ գրականության վերելու կամ վայրէցը: Այս թելադրված էր միայն Արևմտյան Հայատառի սոցիալ-տնտեսական քաղաքական իրավավակով:

Հայ գրականությունը շարունակելով դարերի խորից նեռ իր մշակութային ժառանգության ակնանորույթները նոր շրջանում զարգացում է ապշել իր երկու իմբնուրույն գրական լեզուների՝ արևելայիրենի ու արևմտահայերնի նույնակորմանը: շարունակելով այն միջնէ մար օրերը:

Հայատառ բոլորն գրականությունը թեահանարար, թե բանական և թե որակական առումներով զիցում է բոլ նայ գրականությանը և կազմում իմբնուրույն արտահայտչան գուած նրա մի ամրաժամելի մասը:

Հասկանայում, առավել ևս գմանատելու համար հայատառ բոլորներն գրականության կարեւորությունը, ամերածելու և ուսումնասիրել թե իմշակիօթ՝ պատմական մախապայմանների թելադրանը և այն եղի:

Հայ ժողովուրդի արևմտահայ հատվածը դարեր շարունակ գոյաւա-նում Օսմանյան կայսրության տիրապեստության տակ, առջնդիւնը 6

գտնվել է բօնի ուժացման քաղաքականության դեմ համոյիման, որը եթև լիակատար հաջողությամբ չի պասկին, բայց և անհնուռանք չի անցել: Չարենք ու հետապնդումներից հիմնականում ազատվել են այն մարդիկ, որոնք փոխել են, երեսն միայն առերես, իրենց ազգության ու կրոնը: Հայութափոք հայկական զյուդեր, որոնք անցյալում ունեցել են իրենց վաճերերն ու նկատեցիները, աստիճանամարար ամայացել են և 19-րդ դարի կեսերին այդ վայրերում հայերի հետքն անգամ չի մնացել:

Օսմանյան կայսրության քրիստոնյա բոլոր ժողովուրդների, այդ թվում նաև հայերի համար մեծագոյն արիավիրը եր «Են շիրմե»-ը: Այն քրիստոնյա արք երեխաների պարտադիր մանկահավաք էր, որը հիմնականում նախատեսաված էր հնիշերական զբախամբերի համար: Այս ողբերգական երեւոյթին են անդրադարձել հայ մատնազիրներից Գրիգոր Շաքանաղցին, Սիմեոն Լեհացին, Թադեոս Սերաստացին և մյուսներն իրենց ժամանակագրություններում և ուրերքում: Տիրագոյն այս լիաստը բոլոր պատճառիցիների, ինչպես օրինակ Իրրահիմ Փեյլիի եկարագրություններում հերոսական երանգներ է ստունում:<sup>1</sup> Հայեական աղյուրներում, մասնավորապես Անանոն Սերաստացը նույն որպես «Են շիրմե»-ի սկիզբ նշվում է 1519 թվականը, կապած առյօնամ Սելիմ Սուլջիմի երանամագրի հետ<sup>2</sup>:

Եմիշերական զնիքում մանկահավաքի գոյն դարձած տղաների խալամացումը և մահմեղական դաստիարակությանը դարեր շարունակ փարձանը ու արիավիրը է եղել կայսրության քրիստոնյա հպատակների համար: Որոշ ժամանակակից բոլոր պատճառներ հենվելով նույն ի. Փեղչիլի և նրա աղյուրների վրա, գրում են, որ «Են շիրմե»-ի ժամանակ իշխանությունները մանկահավաքներն անցկացրել են միայն բռնքացած քրիստոնյամերի շրջանում: Որպես պայտոյց թերզում է այդ շրջանների քրիստոնյամերի քրքախոս լինելու համբաւանցը: Թթականարար բոլոց պատճառաբները լուիյայն անցնում են այն լիաստի կողմուն, որ քազմաքիչ զավաններուն հայեր և հույները լիզում կորելու սպառնալիքով ստիպված էին

<sup>1</sup> Մայուսական աղյուրները Հայութանց, ուսաքի և Անդրկուսակ գրքը՝ ժողովագիրքը Անդր. Հ. Իրեան, 1963, էջ 34.

<sup>2</sup> Տե՛ս Մամի Ժամանակագրությունը 13-17դդ., հ.1, Խարմագ Ա.Ա. Հակերյան, Երևան 1951, էջ 169. Տե՛ս նաև՝ Պայման Մ. «Են շիրմե»-ը Օսմանյան կայսրությունում բառ բռնընակության առյօնությունը՝ Պահան-բանավորական համբաւության մասին, Երևան, 1959, Ն 2-3, էջ 328-333.

խոսել միայն բուրքերն լեզվում<sup>3</sup>:

Մահմեդականություն ընդունածներն ազատվում էին մի շաբ հայր կերից՝ որոշակի առավելություններ ստանալով մնացածների նկատմամբ: Բայց մահմեդականություն ընդունածներից շատ շատերը շարունակում էին գաղտնաբարար ճնշու բրիստոնյաները: Ժամանակակիցից բոլոր գիտնականները, որոնք գրադպում են Թուրքիայի տարածումը գյուղություն ունեցած ժողովուրդների պատմության, նշակույրի, ինչպես նաև այդ ժողովուրդների կողմից եկմնականում իրենց այրութենաներով, սակայն բուրքերն ի վեցով ատենդված գրականության հարցերով, միշտ չեն որ գիտականության եմ ներկայացնում ուսումնասիրության առարկա նյութը: Ներկայացնելով օրինակ «Զարանանդիշիկա» կոչվող հումատառ բուրքերն օրականությունն որոշ գիտնականներ (Robert Anhegger, Melkiorre Molleva) սկսում են նրանից, որ բրախոս հույսների գյուղության նրան ունի են նշում: «Լանցից առաջինը՝ 1500 տարիների վաղմանություն ունեցող, դեռևս բյուզանդական շրջանից մնացած բրիստոնյա բուրքերն են: Երկրորդը՝ Թուրքիայի տարածումը ընակվող հոյսներն են, որոնց կամովին հումարենց թիւ և բուրքերն ունեն սեփականություն դարձել: Անհետի երկրորդի կողմից Կոստանդնուպոլիսի գրավումից հետո, որը հիմնադրվեցին հումական և հայոց պատրիարքարանները, բնակչությամ այս ճանար ակտեալ հումարեն, օգտագործելով հումատառ բուրքերն ուն: Մինչ այդ նրանք նկեղեցական արարողությունների ամեամ բուրքերն ուն ցանկացել կատարել և հումատառ բուրքերն կրօնական օրականությունն է այս նպատակին է ծառայել, թեև լավագույնն չի արտահայտել բուրքերն իմայությունը<sup>4</sup>: Գլուխ հայատառ բուրքերն ուստունասիրությանը նվիրված մի շաբ բուրքագետների հոդվածներին, ակնհայտ է պատմություն «ատենդեյու» դեռևս Թուրքիայի հանրապետության շրջանից իւ վեր («Թուրքական պատմական ընկերությամ»՝ որդեգրած պատմության «բուրքացման») նրանց ոնք՝ Հայատառ բուրքերն առաջացումը ներկայացվում է որպես Արևմտյան Ռիկայինա-Լեհական, Դրիմ հակուառված հայերի, ինչպես նաև Օսմանյան կայսրությունում հայերի կողմից ստեղծված օրականություն: Խոսք հայատառ դպշադերների մասին է, որն ավելի վաղ շրջան է և թիւ է տարիերկում

<sup>3</sup> Առաջամ 17. Ազգային Հայութամբ 16-18թ. երես, ԳԱ Երևան, 1980, լո 19-85: Խնամ բարձրացնել գույքը են թիւնում Հայութամբ երաժշտական «Տիկի» տարեցըն. 1929 թ. է 5-34:

<sup>4</sup> Robert Anhegger: Կառունի Տուրքու. «Տերթ ու Երիտա». 1964, N 4, է.2:

հայատառ բորբընենից Այն ուսումնասիրության հատուկ բնագավառ է և զբաղեցրել է բազմաթիվ ելուսպացի (Jean Deny, Tadeusz Kowalski, Omelyan Pritsak, Edward Tryjarski, E.Schütz, Andreas Tietze) գիտնականների: Հայատառ դպջաներնենի առաջացումը բուքը գիտնական Թալար Թերինը կապում է դեռևս 13-րդ դարում՝ Կրիստոնեական-բորբական պետության տարածումը բորբերի և ռուսուհայերի միջև հաճազրութակցությանը ու սերու հարաբերություններով, հայերի ճայրնենի լեզվից երաժարված և ամբողջում բորբերնեն սեփականացրած լինելու հաճամանը:

Հոդվածագիրը նշում է, որ Կամենեց-Ռոդոլիում և մյուս մշակութային հայկական կենտրոններում զրի առնված և տպագրված հայատառ դպջաներնենվ (ինը բարարեցն) մեծ քանչ զբականություն է պահպան Ռուսականի, Լիհաստամի արխիվային ֆոնդներում<sup>5</sup>: Բուքը գիտնականների այս հոդվածները, որուան էլ որ նպատակաւորված ընույթ նե կրում, այսուամենայնիվ ուշագրակ են իրենց ընդգրկած նյութի առումն:

Հոցականիր հայագետ-լեզվաբան Հրաչյա Աբաոյանն իր հայտնի «Հայոց լեզվի պատմություն» աշխատության մեջ զրում է, որ «Ե հարկին այս բուքի վրա նոյն կերպով և նոյն ուժով չէ ազդյած բորբական տիբրակեռությունը, այլ կենտրոնական տեղերում ավելի զորե, իսկ կենտրոնից հետու տեղերում և բան Հայաստանուն համեմատարար ավելի տկար: Այս տեսակեւուից բուքը հայերին կարող ներ բաժանել երեք առաջինան:

1. Նրանք, որ բորբական սպիտեային տակ բուքովին կորցրել նե հայերնեն նկուն և բրբախտու նե դարձեն:
2. Նրանք, որ թե պահել են հայերնեն, բայց ումին մեծ բանակությանը բորբական վոլոխառություններ:
3. Նրանք, որոնց մեջ այդ վոլոխառությանց թիվը յափազանց մեծ չէ»<sup>6</sup>:

**Հայատառ բորբերնեն գրականությունը ստեղծվել է հայ ժողովրդի**

<sup>5</sup> Tait, Tekin, Etmen, Alfabeytis Tükrü - Tarihi ve Toplumu - 1984, N. 4, s. 6-9.

<sup>6</sup> Հայութառ ուղարկուն երաժարություննեն օրինակ Հայութառ Եղբայր Խամբայանական գրադարանուն պահուու 1619 թվականին Եվուս Հայկանուն Քարանասականից կողմէ Տրամադրված «Ազգայ Հայութառ արխանություն» վեցը (1667-5521ց): Այս գաղտնաբառուն են պիտույքանուն երաժարությունները ու շարք տվյալները:

<sup>7</sup> Անձույն Հ. Հայութ թիվի պատմություն, Հ. Երևան, 1951, էջ 255-255: Հայութառ Աբաոյան ժողովրդի և առնաման ժողովրդի այդ վայրերների ու բնակչությունը, որ հայէ ին ապօռ:

ոչ թե հիմնական մասի համար, այլ այն հայերի, որոնք կորցնելով սեփական լեզուն, այնուհամդիրը պահպանել էին իրենց հայատը, քրիստոնեական դավանանքը: Միայն 19-րդ դարի կեսերին, Թամզինարի տարիներին հայերը համեմատարար լայն հնարավորույթն առաջան բացելու ազգային, աշխարհիկ դալորդները: Մոտ կես միլիոն հայեր տպությունով Օսմանյան կայսրության բուրրաչատ գավառներում, պահպանների ազգային ավանդույթները ննացել էին թրախոս: Մինչ մի ամբողջ սերունդ պիտի դառնար հայախոս, ինը երկար տասնամյակներ անհրաժեշտ էր բրախոս այդ հայերին հայորդակից դարձնել ազգային գարբույրին ու նուազոր վերելիքն նրանց համար հասկանայի լիզով՝ հայատառ բուրբերներով կատարված հրատարակույթներով: Այս համեզանամուրով պետք է բացատրել հայատառ բուրբերներ ծնուազիր և հատկապես տպագիր գրականության առաջացումը, հարյուրավոր կրոնա-դավանաբանեական, պատճեական, վելարվեստական և այլ գրականության, իսկ ավելի ուշ՝ թերթերի ու հանդեսների առաջացումը: 19-րդ դարուն հայատառ բուրբերն գրականության այնպիսի բուռն վերելիք ասցրեց՝ բանակական և որակական այնպիսի բարձրակետի հասավ, որ այն գրականությանը հետաքրքրվեցին նաև օտարները, առաջին հերթին ինարկե բուրբերը, բայց որ լեզուն իրենց էր, իսկ հայկական այրաքենն անհամեմատ դարձն էր սովորելու բան օնամետերների պարարական բարդ գրաֆիկամ:

Եվլուպական գրականության բարգանությունները հայատառ բուրբերներով գրավեցին նաև Օսմանյան կայսրությունում ապրու այլ ժողովուրդների ուշադրությունը, որոնք լավ գիտեին բուրբերները (հոյներ, բուղարներ, հրեաներ, ալբաններ և այլն): Այս համամանը նպաստեց, որպեսզի բուրք հասարակացնությունը հայատառ բուրբերների նիշուցով հայորդակից դրանք նոր ժամանակների իրադարձություններին:

Հայատառ բուրբերն տպագիր գլուք ունեցել է ընդարձակ աշխարհագրություն: Այն տպագրվել է թե Օսմանյան կայսրության տարրեր բարձրաներում և թե՝ նուա սահմաններից դուրս՝ ամենատարբեր պատճառներով: Ավելի քան 250 տարիների ընթացքում հայատառ բուրբերն տպագրված գրքերի թիվն անցնում է 2000-ից: Հրատարակվել են դրամը աշխարհի մոտ 50 բաղադրների 200-ից ավելի տպաքանչելիում: Ցուրաբանը տպարան, հրատարակչություն ունեցու է իր դիմքը, իր տպիակ-բաղարական ու կրոնական կողմնորոշումը, իր գրական, լուսավորական նախատակները, իր նախասրած թմատի-

կան, հետաքրքրությունների նախընտրում շրջանակը: Հայատառ բուրքերն ապագիր գրականության երկու ու կես դարյան նպատմության ուսումնամիջությունը՝ փաստուն է հայերի բազմակողմանի կյանքի գոյորդուն իշխան Օսմանյան կայսրությունում, այնպես է Մերձավոր Արևելքում, Եվրոպայում, Ամերիկայում և այլուր:

Միայն Ստումբուլում հայատառ բուրքերն գրեթե հրատարակված են մոտ 85 հայկական տպարաններում: Հրատարակական կենտրոններ են եղել նաև Միսիթարյան միարանության Վենետիկի սր. Պապար կողմու, Տրիեստի, Վիեննայի վանքերն իրենց տպարաններով: Երժադադին սրբոց Հակոբությանց վանքի տպարանուն երատարակվել է և արժարագոր շատ զբուր, ապա՝ Թիվրություն, Միքայելու, Եղիսաբետուն, Ֆրանցիայուն, Ամերիկայուն, Ռուսարիայուն, Մաքրա կղզուն, Շոտլանդանուն և այլուր:

Հայատառ բուրքերն գրականության ուսումնամիջությունը կարևոր է ինձնականություն հետևյալ նկատառությունով:

Ա. Մանուկին գուգահեռ այս գրականությունը հակայտեան ազդեցություն է ունեցել իր բնրեցողների վրա նպաստելով նրանց նուալոր գարզացմանն ու գեղարվեստական նաշակի բարձրացմանը, հաղորդակցից դարձնելով նրանց արև նուանվետական առաջադիմ մարդի նվաճումներիմ:

Բ. Հայատառ բուրքերն գրականությունն ամենափ բազմազան է եղել իր բովանդակությամբ և ժամանակին առողջությունով: Վերջիններս դնբերգողների ավելի լայն շրջանակ են ունեցել: Նույն գարով նայ ազգային շրջանակներից, հայատառ բուրքերն գրականությունը վիաժանանակ դարձել էր բուրքերի և բուրքերներին տիրապետող այլ ազգերի սեփականությունը, դրանով իսկ տարածաշրջանային արևելագիտական կարևոր նշանակություն ձեռ բերել:

Գ. Այս գրականության մի ցույցը ծառայել է հայերի շրջանում կարույրության տարածման նորությանին, իսկ մյուս ցույցը՝ ակատիվորն սպայքարել կարույրեական պրոպագանիզմի դեմ:

Դ. Հայատառ բուրքերն գրականությունն ուշադրության է արժանի նաև իր լեզվական առանձնահատուկությունների առումով (մասնաւորապես գեղարվեստական գրականությունը): Այս պարունակությունը հայերն առանցութ և ոճուր, հայկական ազգային ինքնազիտություն կիր դարձնելով հայատառ բուրքերներ ուսումնամիջության հետաքրքրիր առյուղ հայագետ-լեզվաբների, բուրքագիտների հանար: Հատկապես բարգանական գեղարվեստական հայատառ բու-

թրեմ գրականությունը ստեղծվել է ժողովրդական, խռակցական բռնքերնենի նիման վրա: Սա յորատևասկ համաձույնն է ժողովրդական «կոպիտ բռնքերնի» (կամ նորկը) և գրական բռնքերնի «հետօնաներն»-ի: Թուրքերն իզգի դեմոկրատիզմացիայի այսպիսի աստիճանի էին ճգում 19-րդ դարի բոլոր նշանավոր բռնք լուսավորիչները: Թարգմանությունների այս լեզուն մնում է լիովին նաևկանալի մեր օրերում ևս: Այս փաստը վկայում է հայ բարգմանիշների և հեղինակների խօսական երաշալի զգացողության մասին և դրանով մեծ ավանդ է ներդրվել ժամանակակից գրական բռնքերնի ձևավորման գործում: Վերջապես, հայատառ բռնքերն գրականության ուսումնակիրությունը հմարավորություն կրնանոնի: Վեր համեմու մինչ օրս չուսումնասիրված մի բնագավառ: Այն է՝ հայ ժողովրդի լուսավորչական դերը Օսմանյան կայության մշակուրային կյանքում: Առանձնահատուկ ուշացրության է արժանի այն հանգամանքը, որ հայատառ բռնքերն բարգմանական գրականության միջոցով Արևմտարի առաջդիմ գաղափարները մերքափամուս էին ոչ միայն հայկական, այլև կայսրության բոլոր ժողովրդների, մասնակիրապես բռնքական շրջանակները տարածելով հետամնաց, ուստի ֆեռագական բռնքական բռնապետությունում լիրերակ-տահմանադրական, հեղափոխական գաղափարախոսության սերմները: Հայատառ բռնքերն գրականությունն անկասկած իր ազդեցությունն ունեցավ բարք գրողների ու հասարական գործիչների նոր սերնդի ձևավորման ու զարգացման վրա: Վերջիններս հանդիս էին գաղին հանուն Օսմանյան կայությունում սահմանադրական բարեփոխումների անցկացման և բոլոր հասարակության մեջ աշխարհիկ, նշանակային կյանքի զարգացման:

Հայատառ բռնքերն գրականությունն ընդգրկում է ավելի բան վեց հարյուրամյակ՝ 14-րդ դարից գրեթե մինչև մեր օրերը: Այս գրականությունն ունեցել է յորորինակ գարգացում: Այն պայմանակալուրված է եղել մի կողմից՝ հայ ժողովրդի պատճական ճակատագրով, իսկ մյուս կողմից՝ բուն հայ կյանքուն տեղի ունեցած բարձրական ու տցիալ-տնտեսական վայրուվերումներով:

Հայատառ բռնքերն գրականությունն անցել է զարգացման երկու շրջան ձեռագրական և տպագիր: Ձեռագրական շրջանն ընդգրկել է մոտ 600 տարի (14-19-րդ.): Տպագիր շրջանը գյուտուել է մոտ 250 տարի: Այս շրջաններից յորպարանչյուրն իր առանձնահատկություններն են ունեցել:

1. Հայատառ բռնքերն ձեռագրական շրջանն ունեցել է հարուս

բովանդակություն և ընդգրկումների լայն շրջանակ։ Այն ներառնել է աշուղական գրականության հակա մի հաստված, ազգագրական բազմազամ ու բազմաժամեր գրականություն, Ավետարաններ, կրտնադասամարակական, բարոյախոսական գործեր, բարոզներ, վարքագրական երկեր ու նարութբուռյումների պատմություններ, ինչպես նաև քիմիային, բժշկությանը, բվարանությանը, ասուղագիտությանը, անասնաբուժությանը վերաբերու գիտական ծնուազներ, գեղարվեստական, պատմական գործեր և այլն։

2. Ի տարրերություն հայատառ բոլորերեն ճեսագրական շրջանի, հայատառ բոլորերեն տպագիր գրքի շրջանակները թեմատիկ առումով շատ ավելի ընդարձակ են։ Գոյուրյամ առաջին հարյուրամյակում, թիշ բացառությամբ, հիմնականում ներկայացված են նոյն կրտնադասամարակական, բարոյախոսական երկեր՝ 1727-1840-ական թթ., ավելի քան մի ուղղ հարյուրամյակ, հայատառ բոլորերեն գրականությունը հիմնականում ծառայել է կարողիկ միսիոներներին հայերի շրջանում կարողիկության տարածման համար։ 19-րդ դ. երկրորդ կեսից սկսվում է հայատառ բոլորերեն տպագիր գրականության գարգագման մի նոր շրջան։ Այս ժամանակահատվածի համար ընորոշ է զգուռության աշխարհիկ թեմաներին։ 1850-1870-ական թթ., հայ բաղադրական կյանքի համար համեմատուարար բարենպատու տարիներին, հայատառ բոլորերեն գրականությունը մեծապես նորաստել է հայ ժողովրդի բրախոս հաւովածի հոգեւոր վերելքին, որս ազգային-ազատագրական ոգու վերածննդին և ընդհանուր առմամբ Օսմանյան կայսրությունում հասարակական մտքի զարթոնքին։ Այս շրջամի հրատարակություններում մտն տաս ժամրային ծինը ենք տարբերում։ Այն է գեղարվեստական գրականություն (ինքնուրույն և բարգմանական), պատմական, պատմա-կրոնական աշխատություններ, լուսավորական գրականություն, հրապարակախոսություն, փիլիսոփայուսկան տրակիտատներ, գիտական, գիտա-համբամատչելի գրքեր, դասագրեր, բառարաններ, օրինագրեր, իրավագիտական ակտեր, դավանաբանական հրատարակություններ, կենցաղային գրքեր, հրատարակություններ երեխաների համար և այլն։

Նույնիսկ արդյունամիջյան բոնապետության դաժանագույն տարիներին, երբ խառագույն արգելվ էր լորյած ազգային ինքնագիտակության գարգագմանը նպաստող լորաքանչյուր գրքի ու հայվածի վրա, հայատառ բոլորերեն գրականությունը կարողացավ կատարել

իրադարացիական պարտք՝ հայ ժողովոյի ազգային, հշակութային, հասարակական-քաղաքական համախմբման առարելության առողմությունը: Հայատառ բորբերն գրականության վայրեցի շրջանը սկսվում է 19-20-րդ դարերի սահմանագծին:

Այս աշխատությունը հիմնականում կատարված է հայկական, հայտառ բորբերն և բորբական առյուղների ուսումնասիրության հիման վրա: Այս առումով կարևոր են հայերեն և հայատառ բորբերն մասուց, ձևագիր և հատկապես տպագիր գրքերը ներառյա ժամանակագույքուններ, փաստագրեր, օրենքներ, հասարակական, գրական ու բաներական գրքիների հուշեր: Հարստագույն առյուղներին են գտնվում Երևանի Մ.Մաշտոցի անվան հիմն ձեռագրերի ինստիտուտում Մատենադարանում, որ պահպանվում են 14-19-րդ դ. հարյուրավոր հայատառ բորբերն պարունակող ձեռագրեր: Հայատառ բորբերն ձեռագրական ժամանակության մի նշանակալի ժամանակակից է պահպան են Երևանադեմի, Կ.Պոլսի, Վանեսիլիկ, Վիճննայի հայկական հոգեկան կենտրոնների և այլ հավաքածուներում: Դրամբ ժամանակացրույթները են, կրոնական բնույթի բնագրեր, թժկարաններ, երգեր ժողովածուներ, զիտության տարրեր, զյուլերին վերաբերող իմբուրյան և բարգմանական նրկեր, որոնք ստեղծվել կամ ընդօրինակվել և ներազարդվել են հայկական հոգեկան ու մշակութային տարրեր կենտրոններում: Հայ մատենագրության մեջ իր ուրույն տեղուն ունեցող հայատառ բորբերն գրականությունը մինչև օրս չի արժանացել անհրաժեշտ ուսումնակիրության:

Թագմարի փաստարքեր, փաստներ, որոնք Գերաներվում, առշվամ են հայատառ բորբերն գրականության ու նրա մշակմաներին, գտնվում են Երևանի Զարենցի անվան գրականության և արվեստի բանագրանի արխիվային ֆոնդերում, Փարիզի Սուսպարյան մատենադարանում: Այս առումով մաս հնատարբերություն են ներկայացնում գրական, հասարակական հայտնի գործիչներ Ա. Շոպանյանի, Թ. Ազատյանի, Հովհաննեսի, Ս. Գևորգյանի և այլոց արխիվները:

Հայատառ բորբերն ուսումնասիրության համար առանձնահատուկ արժեք են ներկայացնում հայերեն և մասնավորապես հայատառ բորբերն պարբերական մասուցի հավաքածուները, որոնք սկսվում են 19-րդ դարի կեսերից: Արև մատահայության կյանքի տարրեր կողմնորի մասին բազմազան նյութեր են պարունակում «Կ. Պոլսի տարր Փրկչի ազգային նիվանդանոցի», Կավուշի տարբերեցը, Թուղիկի «Ամենա տարբերություն»: «Արքին հրատարակվել է հայտնի բանասեր Թևողորու

Էապճինյանի (Թեոդիկ) կողմից 1907-1929 թվականներին<sup>8</sup> Հայ ճշակույքի, գիտության համարյա բոլոր հայտնի գործիչների համագործակցությամբ, բարգմանական հոդվածներով ու նկարագրու այս տարեզրոբերը բարձրորակ ու բազմակողմանի հրատարակություններ, ինքնատիպ համբագիտարաններ են, որոնց հարատագույն նյութերը մինչև օրս չեն կորցրել իրենց արժեքը գիտական շրջաններում ևս։ Կ.Պոլսում հրատարակված մամուխց զառ օգտակար են նոր նաև Թիֆլիսում, Շեյրորում, Հայեպում, Փարիզում և Թուստում տպագրված պարբերականները։

150 տարիա պատմություն ունեցող հայատառ բուրբերնեն մամուլ հայ պարբերական մամուլի մի ամբակտելի մասն է կազմում Միայն 1850-1890-ական թթ Կ.Պոլսում հրատարակվել են ամենի քան 100 անուն հայ պարբերականներ, որոնցից մոտ 54-ը հայատառ բուրբերնեն։ Այս հարցին լավագույնս ամեղայարձել է հայտնի բանասեր, արևմտահայ բատրոնի պատմաբան Գառնիկ Ստեփանյանը<sup>9</sup>, «Մանգումի Եփքնար», «Մերմեմանի Եփքնար», «Ալինարիի Երծիյան», «Մեմնաայր Հավատիս», «Զօհալ» և այլ պարբերականներ լայն ժողովրդականություն են վայելել երատարակվել տարիներ շաբունակ մեծ տպարաններով, ունեցել բաժանմորդներ և բազմաթիվ բորբակիցներ տարբեր գավառներում, արտասահմանում, կարդացվել տարբեր ազգների կողմից։ Այդ թերթերից օրինակ «Մանգումի Եփքնար»-ը երատարակվել է 1866-96, 1901-1909, 1912-1917 թվականներին (մոտ 40 տարի)։ Ավելի քան 30 տարի հայատառ բուրբերնեն հրատարակվելուց հետո, Կարապետ Փանոսյանի հիմանդրության պատճենով օրաթերթը թողնելուց հետո՝ 1901-1917 թթ. հիմնականում հայերնենի է վերափոխվել, տպագրելով նաև հայատառ բուրբերնեն հոդվածներ։ Այն եղել է ազգային, բարդարական, գրական և տնտեսական օրաթերթ։ Բաժանմորդագրությունը կատարվել է Կ.Պոլսում, գավառում և արտասահմանում։ Նման հայատառ բուրբերնեն պարբերականներն իրենցից անհատնում աղբյուր են ներկայացնում Օսմանյան կայսրության կյանքի բոլոր կողմերի ուսումնախրաբյան համար սոցիալ-տնտեսական, բարդարական վիճակի, կայսրության տիրապետության

<sup>8</sup> Թեոդիկ «Ամենուն տպահուսուր» 1907թ. սկզբն է երատարակվել։ Կ.Պոլսում, 1924-29 թվականներին Փարիզում, 1926 թվականը վեճունիւն։

<sup>9</sup> Կ. Ստեփանյան, Հայուսուն բազրերն այս մասն ։ («Հայ պարբերական մամուլ պատություն» Հ. 1. Երևան, 1963)։

տակ գումար ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումների և այլը: Հայաստան բոլցերին պարբերական մամուլը ներկայացրել է արևմտահայերի բազմաթիվ կյանքի ամենօրյա հայելին: Թերբն անդրադարձել է Մատամբուլին հուզող գրեթե բոլոր հարցերին մշակութային ու ազգային խնդիրներից մինչև քաղաքի սահյուտարական վիճակի, կոմունալ հարմարությունների, արևելյան ընդհանուր հետամեացության արտահայտություններին, որոնք վարակի հիվանդությունների պատճառ կարող չին հանդիսանալ: Բննադրատվել է մայրաքաղաքի երիտասարդության մեջ տարածված մի շարք այստեղ՝ խաղաղությունը, կանանցությունը, պեճնամուլությունը, պարտարույժ կյանքը: Երիտասարդների ազգագայի հարցերով լրջորեն մտահոգ քերք տարագրել է բազմարդիք հորվածներ կրթության նախին, երիտասարդների ջանքերով կազմակերպած մշակութային միջոցառումների, բատերական ներկայացումների, ընթերցաբանների մասին: Թերբի կարծիքով համբոցութ աշխատանքով գրածված հայ երիտասարդները նպատակահարմար են, որ վիճակուրական տուրք վճարելով ազատվելին ծառայություններ և լուսավորական աշխատանք կատարեն ժողովրդի շրջանում: Գավառին նվիրված հոդվածները ճամապարհութի, որուակցի տապավորությունների հետ միասին ընդարձակ տեղեկություններ ևն տվի այդ գովառների բնուրյան, պատմական եռաշարժաների, ազգային, կրօնական ավամեռյանների, առջակ տնտեսական վիճակի, գովառներուն հայ և նյութ բնակիչների կրած հաղածամբների մասին: Գավառական տարրեր կենտրոններից (Մուշ, Առա, Թոքատ, Պարտիկակ, Հաճըն և այլն) տուածված նախակենցի տպագրություններ բացահայտել է տիրող կամայականությունների, բարանի, սարտափի մրնություն, փաստել կատարյալ անիշխանությունը, որինականության շգոյակությունը:

«Երտիշյալ պարբերականները հրատարակվում են ժամանակի իրանշական պարբերականների նմանությամբ: «Արտարին կյանք», «Ներքին կյանք», «Ազգային», «Առևտուական», «Նորություններ», «Նպարական», «Կրտնական», «Գրքեր», «Թատրոն», «Լուրեր գրավուց»: «Հայտարարություններ»,և այլ վերնագրերի ներք տպագրվել են նյութեր, որոնք բազմարդիկ ընթերցույնների համար տեղեկատվության միակ աղյուսը են հանդիսացել Եվրոպական պարբերականներից բարգմանվել են բազմարդիկ օտար տերությունների պատմության, ազգագրության մասին հորվածներ, պատմական դիմերերի, ժամանակակից հրավիճակի, մշակույթի, այդ երկրներուն գիտության, բանակի,

անգամ բյուջեի, քաղաքական ու տնտեսական կյանքի վերաբերյալ ցույրիք:

Հայաստան բուրբերն թերթելից շատերը ֆրանսիական պարբերականների օրինակով ունեցել են թերթունների բաժին, որ շարունակարար, օրը օրին տպագրել են հիմնականուն ֆրանսիական հայտնի վեպեր, երբեմն էլ նայ ու նոյնիսկ բուրբերն պարբերականները բազմաթիվ բաժանորդներ են ունեցել ոչ միայն խոչոր քաղաքներում, այլ ուղ Երևան մնել Սովորական երևոյթ էր, երբ այդ թերթելոց դրանցուն տպագրված հետարքի հոդվածները կարդավելով ու քննարկելով են թերթառներուն և սրճարաններուն Հայաստան բուրբերն որոշ պարբերականների հեղինակությունն այնքան մեծ է եղել, որ մյուս ազգերի առաջադիմ մտավորականորյանը, նաև մավրուսակն բուրբերը ոչ միայն համագործակցել են դրանց, այլև սովորել են հայկական այրութենու և կարդացել այդ թերթելոց<sup>10</sup>:

Հայաստան բուրբերն մամուլը մրատարի չի եղել. Այն արտահայտել է հասարակության տարրեր խավերի գաղտափարները, ներկայացրել բաղադրական, կրոնական տարրեր հոսանքները. Թերթերի անոնցների կողքին կարելի է կարդալ այդ թերթերի բնույթը որոշող բաներ բաղադրական, ազգային, լիքերայ, պաշտոնաթերը, բանակիրական, գրական, քննադատական, գիտական, տնտեսական, առև տքային, տնտեսական, հասարակական, տեխնիկական, մանկական, նշակորային, երգիծական, պատկերապարոյ և այլն, և այլն: Երբեմն պարբերականներն ունեցել են բնարաններ: Այսպես օրինակ «Նեվա կամ Մէտայի Երմնենան» (Զայն կամ ձայն Հայկական. Կ.Պոլիս, 1910.) շաբաթաթերթի բնարանը էր «Հայ ազգային ձայնը բուրբերականական լաւի ընկ տալու ծրագրով»: Խմբագիրն էր բուրբազնությանը, օամաներն բազմաթիվ դասագրերի (հայաստան բուրբերն և օսմաններն) հեղինակ Միհրան Արիկյանը (1855-1938):

Ի թիվս հայաստան բուրբերն իրատարակվող մամուլի, հայերեն բազմաթիվ պարբերականներ ունեցել են հայաստան բուրբերն ընդարձակ բաժիններ իրենց բուրբազնու ընթացողների համար: Պարբերականների մի մասը ներել են Երևանու, Խառիսու... Նման պարբերականները

<sup>10</sup> Բայց նույնություն ապեսուու հայերեն ուներ, պատուեն կարուն Ան-Մանդանի Եջուառ-շաբաթ նաև՝ օգոստ և նույն գիտական Անդ Անդ Թաթչյանի շքանից բարբառն նկատվու է մասնաւոր աշխատանք առ Անդ Անդ Թաթչյան և Անդ Անդ Թաթչյան...)

Ծերի թիմ եմ պատկանում Ն. Իգիելյանի «Թոշնիկ», Հ. Վարդանյանի (Հովսեփ Փաշա) «Սամուկ», Մ. Ալվատյանի «Արարատ», Հ. Մամյանի «Սեղու», Հ. Պարոնյանի «Թատրոն» և այլն: Հայ (Խայթքեն և Խայտառ բուրքերին) պարբերական մամուլ անհատուած աղբյուր է Խանդիսանում Օսմանյան կայսրության ժողովությունից կամքերի տարրեր շրջանների, մասնավորապես արև մոտածայ իրականության բազմակողմանի ուսումնասիրության համար: Հայատառ բուրքերն պարբերական մամուլի մասին նօակի եղկու հոդվածները պատկանում են Գ. Ստեփանյանի և Վ. Քարբյանի գրքին: Այսուհանդերձ մինչ օրս մասնագետների կողմից այն չի արժանացել անհրաժեշտ ուսումնասիրության:

Հայատառ բուրքերն զբականության ուսումնասիրությունն ներառում է նրան մաս կազմող բոլոր ճյուղերի համակողմանի աշխատասիրությունը: Տպագիր գրքերի և պարբերական մամուլի մատենագիտական մեր կազմած ցուցակների առաջին տպագրությունը եղել է դեռևս 1985 և 1987 թվականներին Հայատառանի Գիտությունների Ակադեմիայի հրատարակության կողմից: Տպագիր գրքերի մատենագիտության համար հիմք նմ ծառայել ոչ միայն հայ գրքերի տարրեր շրջանների մատենագիտությունները, ժամանակի մամուլը, այլև աշխարհի տարրեր բաղադրելու հայկական հրատարակչական տների, տպարանների, գրավաճառանոցների ցուցակները, բանկարաններին, արխիվային նյութեր, հայկական հոգևոր կենտրոնների, Միբրարյան միարանության, հայ և օտար բուրքական հրատարակությունները և այլն:

Հայատառ բուրքերն մամուլի ու զբակառարակության զնանաւում ժամանակ յափազանց կարևոր նմը համարել խորիշյային շրջանի հայտնի արևելագետներ, ս. Պետերբուրգի համալսարանից Անատոլի Ժելյազովի և Առյուն ս. Պետերբուրգի Արևելսագիտության ինստիտուտի նախակի տնօրին Շորիք Պետրոսյանի Օսմանյան կայսրությունում տպագրությանն և հրատարակախուսության ուսումնասիրության ու կայսրության հասարակական բաղադրական կյամքում, որանց ունեցած դերին, լուսավորական շարժման պատմությանը նիշրված աշխատությունները:

Հայատառ բուրքերն զբականության լեզվական առանձնահատկություններին է անդրադարձել մեծ լիգևարան Հրաչյա Անառյանի իր հայունի «Համեմատական քերականության», մեջ:

Համեմատարար ավելի լուսանակիրված բնագավառ է այսուների հայատառ բուրքերն ստեղծագործությունները ամբարված ծեռագիր 18

Ժողովածունելիում և տպագիր Երգարաններում Դիաճ անդրադարձել են գրականագիտներ, ազգագրագիտներ, երաժարակներ մի որոշ մասը, դրանց առանձին հեղինակների մասին գրվել են մենագրություններ, եղբաձնելու Այդ ժառանգության մշակմներից են նոր Մ.Թաղիալյանը, Դ.Այիշանը, Մ.Էմինը, Առ.Պայտանյանը, Հ.Գարբրիյանը, Գ.Զարդիանացյանը, Մ.Արենյանը, Ա.Շոպանյանը, Ար.Մահմայանը, Լ.Սեսրովը, Հ.Պերպերյանը, Գ.Թարվերյանը, Գ.Լևեյանը, Ս.Մնացականյանը, Հ.Մահակյանը, Ը.Գրիգորյանը, Ա.Շահումյանը և ուղիներ Օտար տառենասփրութեած հայատառ թուրքերեն աշխական գրականությամբ գրադիլ են գերմանացիներ Ենթ Լիստի մանը, Օստառ Հայոց բոլոր գիտնական նուար Քյոփրուլուն, Վերօնի տասնամյակում Խորգոր Բուրդ, Սարդի Խոզը և ուղիներ Պողա-նայ բանամեր Գեորգ Բանագործյանի Կ.Պոլի պատրիարքներ Հովհաննես Կորոնի, Հակոբ Նայյանի, Զարարիա Կառովիանցու, Ներսէս Վարժապատյանի, ինչպէս նաև արևոտսայ անվանի ճամակութեական Հովհաննես Տերյանցի գործութեառյաններին նվիրված ուսումնա-արդրյաններում հետաքրքիր նյութեր ենք գտնու հայատառ թուրքե-րն տպագիր գրականության սկզբանական շրջանի, նրա տարածման շարժառիթների մասին Գեորգ Բանագործյանի պղոսահայ տարագու-թյանը նվիրված մատենապիտական աշխատանքներում միշտ ներ-կա է նաև հայատառ թուրքերն տպագիր գիրքը Հայատառ թուրքե-րն մեռագրելին և տպագիր գրքերին անդուայարձած, այս նաև թուրք գիտական շրջանակներին հասու դարձրած Կ.Պոլի պատրիարքարա-նի նախկին ղիվանապետի ու գրադարանավարի ավանդը հայատառ թուրքերն գրականության ուսումնասփրության ասպարեզում նշանա-կայի է:

Վերջին հիմնամյակում, հատկապես արևելքում, առանձին հեղի-նակների և հայրենակցական միարյունների կողմէց երաժարակվել են Օսմանյան կայսրության հայաշատ գալատեններին նվիրված մի շարք աշխատություններ: Պատմական, աշխարհագրական, տոցիպ-տանտեսական նկարագրություններից բացի այս գրքերի մի նար հա-րուսա ֆաստական նյութ է պարտնակում տվյալ գալատեններում միախ-ներական տարրեր խմբների ներափանցման ու գործունեության, կա-րողիկ ու բողոքական հայ համայնքների, հայ առաքելական նկատեցու հետ մրանց փոխարարակրությունների, մշակութային, ուսումնական, երաժարականշաբան կյանքի վերաբերյալ: Այս գրքերում կան հայերն ու հայատառ թուրքերն բազմաթիվ փաստարերեր, գրական հուշար-

ծանմեր, ազգագրական հարուստ մյութ: Հայատառ բուրքերնի հետ առնչվող մյութեր նն պարտնակում հիմնականու բրախոս գալառ-ներին նվիրված երաժշարակությունները: Այդպիսիներից և՛ Արարէի-րիմ, Եղիշէլիսային, Այնքապին, Սերաստիային, Աղամային, Խարբեր-դին, Կեսարիային, Երգնելային, Չեյրումին նվիրված գործերը: Հայա-տառ բուրքերն գյուղատնտրյան մասին հանդիպում ենք բուրքական բառունի պատմաբանների աշխատություններում, հուշնորում, հողվածներում: Այն է Ահմեղ Ռեշիկի, Շուրիհան Արփաղի, Թահա Դուր-դերի, Վասիքի Ռըզա Զորուի, Ահմեղ Ֆեհիմ թվի, Մոհիսին Էրրօղրուի, Մերիմ Անդի, ինչպես նաև բուրք բատրունի ուսումնափրոդներ Գալ-ճիկ Ստենիսանյանի և իսուպացի Այրիչո Թալասառի գործերու:

Հայ բատներական խերերը, որոնք իրականացնում էին նաև բուրք-ըն Մերկայացումներ առատորներ օգտագործում էին հայատառ բուր-քերնց թուրքերն Մերկայացումների տեխնուերը, դերերը հայատառ բուրքերն էին: Հայատառ բուրքերնույն են սովորեն իրենց դերերը նաև առաջին բուրք դերասանները, որոնք խալագեն են հայկական բատե-րիամբերում: Այս բատրունիների համար բուրք լուսավորիչների կողմից գրիմած կամ բարզմանած, աղապտացված պիեսները եղել են հայա-տառ բուրքերնույն: Այս նասին եկացաւակում է նաև բուրք բատերագետ Մերիմ Անդը և իր ուսումնափրոքյան մեջ թիրում հայկական բատե-րակամբերի բուրքերնույն խալագված (Խայատառ բուրքերնույն գրիմած) 366 պիեսների մի գամկ: Դրանք մեծ հաջողությամբ օգտագործվել են հանրապետական շրջանի բուրք բատներախմբերի կողմից իրենց գոր-ծուներյան սկզբնական շրջանում:

19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին, համուկապին առաջին հա-մաշխարհային պատերազմի տարիներին նվազել էր հայատառ բուր-քերն կարիացողների թիվը՝ ինտենսար նաև տպագրվող գրքերի, մա-ճույնի թիվը:

20-րդ դարում բուրքախոս հայերի վերջին սերունդների համար երաժշարակվել, բարզմանվել են հիմնականու բարոզական բնույրի գործեր:

ու մեջացու յարդունամ պատճեռ ուն ուժին է Խոհեմազ  
աշխատանք ունենալ քանի քանի վեցու օրու ըստ ուղարկութեան  
վայսունի գումարան անհամ քանի ու քանի վայսունի գումարան  
անհամ քանի անհամ գումարան անհամ վայսունի գումարան  
նույն գումար նույն վայսունի գումար անհամ գումարան անհամ գումար

## ՄԱՍ ԱՂԱԶԻՆ

### Հայատառ բուրքերեն գրականության սկզբնավորման ճեղագրական շրջանը և հայատառ բուրքերեն տպագիր գիրը՝ 15-19-րդ դարի սկզբին

Գլուխ Ա.

### Հայատառ բուրքերեն գրականության ճեղագրման բաղադրական-տպիամ-տնտեսական և մշակութային նախադրյակները

15-18-րդ դարերում Օսմանյան կայսրությունում արևմտահայությունը տպիալական ու ֆիզիկական ամասելի հետապնդումների և բռնի ուժացման է ենթարկվել: Արյունաբերությունը եղի է հայերի արտահնոր դիսկի Արիմ, Լեհաստան, Ռումինիա, Հունգարիա, Ֆրանսիա և այլ երկրներ: Թուրքիայի, Պարսկաստանի հպատակության տակ գտնվող քրիստոնյա ծողովուրդների զվահն դասույցան սրի նման միշտ է կախված է եղի ֆիզիկական ոչնչացման վտանգը: Մինչեւ 3-րդը (1595-1603) առաջն մի լուրջ պատճենի երանայից ոչնչացմեկ 700 քրիստոնյա<sup>11</sup> Հայունի է, որ Սելիմ Մասադին (1512-1520) երանանով սպանվել են 40 000 շիհմեր եհմնականում քրիստոնյա մեկ պետքուրդ, մեկ կրոն» իրականացնել իր «մեկ պետքուրդ, մեկ սողովուրդ, մեկ կրոն» զարդարության պատրաստվել եր բնաշնչել նաև կայսրության քրիստոնյաներին: Կարսական առաջնորդին շեյխ ուլ- խալամին

11 Գրիգոր Վարսանիքը: Ժամանակագործն, Եպիստեմ. 1915, թ. 10 Ընտիեռ տա գ. Խորանարդ. Ժամանակագործն:

հաջողվում է փոխել այդ որոշումը, հաճողելով սութանին, որ Թուրքիայի համար շատ ավելի օգտակար կլիներ երանցից յուրաքանչյուրից շնչահարի վերցնել<sup>12</sup>: Որպեսզի մահմեդականը քրիստոնյա պատմեր նրան ոչ մի պատճառ պետք չէր: Երբեմն բուրքաշատ վայրերում մահմեդականացած քրիստոնյաները երկու ամուս ունեին, բուրքական և իրենց խկականց: Տամբ, ընտանիքներում իրենց լեզվով էին խոսում, իսկ դրամը միայն բուրքերն էին:

Մահմեդականներն ամսահմանափակ իրավունքներ ու առավելություններ ունեին «անհավատների» նկատմամբ: Օսմանյան կայությունում ապրող հայերի համար ահավոր սպառնալիք եր բայի մահմեդականացուումը: Հրաժարվելու դեպքում նրանք անսանի տանջանքների էին հերթարկվում, այրվում խարույզների վրա<sup>13</sup>:

Հայկական բնակչության վրա դրված էին մոտ 100 տեսակ հարկեր, որոնք համարվում էին ամսահմանաժամկետություն: Եթե որևէ մեկն ուներ տաս որդի, նրանց բոլորից էլ հարկ էր զանձվում նույնիսկ նրե նրանցից որևէ մեկը զնար: Ամենուր ավագակներ էին, ամենուր բարձ, կուտորած ու բնություն էր, - գրում է Միհենն Լեհացին<sup>14</sup>:

Թուրքական Ֆեռյազմերը հանդուրժում էին քրիստոնյաներին և իրեանցին լոկ այն բանի համար, որ նրանցից ամենամեծաս մնձ օգուտ ունեին բան իրենց հակառակակիցներից: Նրանց բոլոր էին տախի ասրել Շիշտ այսպես, իմշան ուս արդում եր ոչխարների ու մնդուների համար նրանց կարի և մնորի դիմաց, - գրում է 17-րդ դարի ֆրանսիացի հետինակա Միշել Լը Ֆերոը<sup>15</sup>:

Բազմաբարիկ ուսումնասիրողներ են անցրադարձել Օսմանյան կայության հակառակության տակ գտնվող ոչ բոլոր ազգերի իրավագործիկ վիճակին, նրանց դեմ ուղղված տարրեր հակածանքներին թագուարիկ առցյուրներ կամ քրիստոնեական եկեղեցներն ավերելու, բարանելու, մակարական վերածելու կամ մի ժողովրդից վերցնելով մասին հանձնելու մասին: Երբեմն, եթե մակարական շինարարության համար քրիստոնյաներից զանձվող գումարները շեմ բավարարի երանան է արծակվել քրիստոնեական եկեղեցների ավերման մասին: Համայնքների ա-

12 Լեհ Հարց պատմություն, Երևան, 1946, հ. 3, էջ 175.

13 Գեղարք Շահումանիք: Ժամանակագրություն... էջ 15.

14 Միհենն Լեհացի: Ուղարկություն, Վրաչան, 1936, էջ 153-154.

15 Michel Le Féron: Essai présent de la Turquie. Paris 1675, p.217. (Տե՛ս Հայ ժողովրդ պատմություն, հ. 4, էջ 233).

ուաշնորդները նրե հսկողութեամ, առաջ լրացուցիչ գոմարների շնորհիվ երբեմն կարողացել են փրկել այս կամ այն նկեղեցին ավելումից. կամ շայումակել որանց վերակառուցմանը. Երբեմն նկեղեցիները քանչվել են այն պարզ պատճեռով, որ իրք թէ մի վայրում նրկու նկեղեցոց ավելին ունենալի արգելված է նույն:

Մի ժի այլ է նույն հայերի վիճակը Ա. Պողոսի, որ համեմատաբար ավելի ազատ են զաւցել: Այսուեւ նրանք ամենամեծաւ թիւ են հետարկելու ֆիզիկական ոչխացման և տեղահանությունների: Այս հանգամանքի շնորհիլ Կ. Պողիս դեպի իրեն է զրավել կրոնական ու մշակութային բազմարի գործիչների ու միայն Արքայուան, այլ նաև Արքելյան Հայաստանից:

Կ. Պողիսը համախմբել է բազմարի հանրահայր հայերի, որոնք իրանց գործունեությանը մշանակայի ավանդ են ունեցել Օսմանյան կայսրության զրակամուրյան, մշակութի, գիտության, առևտի, և կյանքի այլ բնագավառների զարգացման մեջ:

1453 թվականի մայիսին սուլթան Մեհմետ Ֆարիհ (Ավանոյ) 2-րդ զրավեց Կոստանդնուպոլիսը: Իր նոր օսմանարքի վերաբանեցման նպատակով Սուլթանը բազմարի հայերի տնտեսութեան ու քարեւ Կ. Պողիս: Նրա նպատակն էր ոչ հոգնական խոռվի: Խայերի միջոցով քարաքի բյուզանդական բնակչությանը հականչիու ստեղծել: Կ. Պողիս զրավութից հետո սուլթանական հառուկ երթարտակով հումական համայնքի (ռում. millet) պատրիարք էր ճշանակել Կենարիսը: Հումական համայնքը միավորում էր ոչ միայն հոյներին, այլև ողբական նկեղեցուն սպատկանու բոլոր նյուու հպատակներին և՛ բոլորաբներին, սերբերին, մոլոխներին, վարախներին և քաղաքացիներին կայսրության ամբողջ քրիստոնյան բնակչությունը:

Մայրաքաղաքի զրավութից մի քամի ամիս անց, աշնանը, Կ. Պողիս հասան հայ վերաբանակմերի առաջին խմբերը Սուլթան Մեհմետ Ֆարիհ 2-րդի և նրան հաջորդած տիրակալների օրոր Կ. Պողիս վերաբանակեցրին հայեր տեղահանութեան Ամկարայից, Կախայից, Եվլուկիայից, Ակնից, Կիլիկիայից, Արակերտից, Թաքերդից, Տրավուկունից և բոլոր այն տարածքներից, որ զրավել էին բռյութի կողմից: Առանձնապես մաս բնով հայեր բերվեցին Կ. Պողիս Զալալիների ապատամության շրջանում 16-17 դդ. և նրանց թիվը հստակ ավելի քան 50 000-ի: Մեհմետ 2-րդը վտանգավոր և ամիմաստ համարեց քրիստոնյան բնակչության նման մեծ ուժի, իշխանության կենտրոնացումը մեկ անգի այն է հումական պատրիարքի ծեղութ:

Ա.Պոլսի գրավումից հետո արևնտահայոքյան կյանքում ամենամեծ իրադրույթը ստորան Մեծին 2-րդի հրովարտակով 1461 թվականին Կ.Պոլսում հայկական պատրիարքական Արքոյ հաստատումն էր Թորոսայից թերփած Հռվակիմ Նախակողացոց դարձավ առաջին Կ.Պոլս պատրիարքը 1478 թվականին։ Նրա հոգևոր քաղաքական իշխանությունը տարածվում էր ոչ միայն հայ լուսավորական հայերի, այլև վրացի, աղվան, ասորի, դպուի, հայքի միարնակ ուղղափառների վրա։ Այս և հետագան համայնքի բաժանումը հիմնվում էր պարզապես դավականիք տարբերության վրա, առանց հաշվի առնելու ազգային առանձնահատկությունները, քանի Կորունը ժողովարյանին բաժանում է ոչ թե ցեղային, այլ քան կրտսեան առանձնահատկությունների։ Պոլսի գլուխութից 40 տարի անց հաստատվեց նաև երեսական համայքը, որի կրտսեան առաջնորդը խայտան բաշին, բոլոր տնօւակեններից հավասարագոր իրավունքներ ուներ վերաբիշխալ եղոյն և հայ պատրիարքների հետ։ Այս ճաշին նե վկայում բոլոր պատմաբաններ Անմեջ Ուժինը, Ա.Օրիշինին<sup>16</sup>։

Կրտսեական այս երեք համայնքների համակարգը ավանդաբար մնաց հետագա դարերի ընթացքում՝ սուլթանների կողմից փորձելով ծառայեցնել իրենց նվաճողական նախառակներին և նյու կողմից օտար պետությունների ազդեցություններից հետո, նյու հետագան պահեցին համար։

Տարիշ ի՞նչ նպատակ էր հետապնդում պատրիարքարանի հաստատումն Կ.Պոլսում։ Խնչպես Արևմտյան, այնպիսի է Արևելյան Հայութան ուներ մեկ ընդհանոր հոգևոր հովիվ՝ Աթենայն Հայոց կարողիկուոց, որի արոտանիստը դարձել էր Ա.Էջմիածինը, ուր 1441 թվականին Հայրապետական Արքոց տեղափոխվել էր Կիլիկիայից։ Թանի որ Եջմիածինը գտնվում էր Պաշտկառապահի ազդեցության ներք, ուստի Կ.Պոլսում հիմնելով Պատրիարքական Արքու, որը ենթակվում էր սուլթանին վերջինիս պիտի ենթարկեր նաև հայ ժողովովի բոլորական տիրապետության տակ գտնվող հայությանը։ Պատրիարքը ու միայն հոգևոր առաջնորդ էր, այլև հայերի ներկայացուցիչը կայսրությունում։ Պատրիարքը պատասխանառու էր Ա.Դուռ նույ (Բարձր Դուռ), պալատում, հայերի համար։ Կ.Պոլսի հայ պատրիարքարանի ուներ ո-

16. Այդուհի Հ. (նախան). Պոլս և իր թագ. 1565. Վայք, թ. 208. Տե՛ս նկ. Ա. Սունկուն և Ռ. Ա. Կորտենս. Современное состояние Отоманской империи. С.-Петербург, 1877, стр. 164.

բոշակի իրավունքներ և պարտականություններ սուլթանական պալատի նկատմամբ: 1764 թ. Խոմիչի 3-ին հայոց պատրիարք Գ. Քիզըր Պատմաճանին տրված «թերաք»-ի (Խորվարտուկ) համաձայն, որն իր տևակի մեջ ամենաբարձրականներից էր, առվառ էր: «Կ. Պոլսի պատրիարքն իրավունք ուներ ոյուշելու Անառողիայի և Շնումիի հայ ազգաբնակչության նոգենոր խմբինների, ննարդելու համ Գուարելու առաջնորդներին, թեմերի ղեկավարներին: Պատրիարքին էր պատկանում առանձությունների, բաժանությունների և քաղաքացիության այլ գործում որոշիչ դիրքը: Պատրիարքը էր կարգավիրուս նկատեցարանի հոգերի, իստակմերի խնամակալության խմբինները: Նա ուղարկում էր նվյակներ՝ հավաքելու ներդիցական տուրքերը, նվերները: Գավառներից սուլտան բողոքները համանում էր սուլթանին կամ նրա գրասենյակին: Պատրիարքը պատժում կամ նրբան համառ էր նրան, որ պատժել էր տալիս «ճուրյալ հայերին», որոնք հերետիկոսության ուղին էին բռնկ: Պատրիարքը էր իրավունք էր տալիս մայրաքարտում նկատեցիներ, վաճեքը կատարելու համար, իմացին նաև դպրությի, նախապատրաստական դասարանների, տպարանների բացման, գրեթե իրաստարակության համար»<sup>17</sup>.

Հայ պատրիարքները թե օգուվում էին բազմարիկ առավելություններից, սակայն հարկերից ու սուլթանին տրվող տուրքերից ազատված չէին: Նշանակոր հայագիտ Առևա Խնիճյանը փաստում է, որ սուլթանական գանձարաննին արվող նվերներն ու տուրքերից որոշված էին իրամանագրով<sup>18</sup>:

Տուրքերից բացի պատրիարքը պարուակոր էր տարբեր աշխանքուն սուլթանին բանկարծեր նվերներ մատուցել<sup>19</sup>: Խամի որ Կ. Պոլսի պատրիարքարանն արևմտահայության համար իրենից ներկայացնում էր ոչ միայն հոգեւոր, այլև քաղաքական իշխանություն և տնօրինում էր նյուրական մեծ կարողության, ուստի միշտ է սուր պայքար է

17 Հայ ժողովի պատմության, հ. 5, Եր., 1974, էջ 302-303, թիվին նույն Փալեռո Ա. Հ. Օֆիցիալայի գույքում և ուժություն ունեցող պատուցել: Խամի որ Կ. Պոլսի պատրիարքարանն արևմտահայության համար իրենից ներկայացնում էր ոչ միայն հոգեւոր, այլև քաղաքական իշխանություն և տնօրինում էր նյուրական մեծ կարողության, ուստի միշտ է սուր պայքար է

18 Խնիճյան Առևա. Աշխանքագրության բառեալ պայմանագրի, Վճառքի, հ. 5, էջ 117 նշանակում էլու Խնիճյան Դ. Աշխանքագրության...:

19 Մ. Մարտիրոսյան Առաքելացության, Ժամանք հ. 10716, Թուքինց պատմության, էջ 25 թ նայտնության մեջ Անոնինարացան, ծնն. հ. ...:

Աղվել պատրիարքական արութին տիրանալոյ համար: Պատահական չէ, որ Երբեմն աշխարհական մնահարուստ ամրաները պատրիարք չին ընտրում ու իրենք էն համարվում արքունիկ և օգտվում էն իր պատրիարքին արքող բոլոր իրավունքներից: Մնականարար սուրբանական կառավարությունը շահագրգոված էր, որպիսզի հաճախակի փոխվեին պատրիարքները: Յուրաքանչյուր նման դեպքում կառավարությունը որոշակի գումար էր զանգում: 1600 թվականից մինչև Հովհաննես Կոլուտի պատրիարք դամալոյ (1715 թ.), 115 տարին ընթացքում Պատրիարքական Արքուն բն բարձրացել 55 դեմքեր գրիք 60-70 անգամ, միջին նաշվով հազիկ 2-3 տարի պատրիարք մնալով: Ավելին, նոյն անգը կարողացել է մի քանի անգամ պրաղեցնել պատրիարքական արքոց: Այսպիս օրինակ՝ Կարապետ Կեսարացին 5, Նավիր Արքեցին՝ 4, Հովհաննես Խուլը՝ 3 և այլն<sup>20</sup>.

Պատրիարքարանը որպեսզի սուրբանական զանձարանին նուժոր հարկերն ու նվերները առիվնած էր իր ներին տարրեր հարկեր հավաքել բորբականուակ հայերից: Այսպես օրինակ, յուրաքացուր հօգուոր առաջնորդ հօգուոր պատրիարքարանի վճարում էր 600 դուռուց, Անկարայից՝ 200, Անյերան Թորաաից, Իհարքերից, Ուրժայից, Սերաստիայից, Տրավիզունից, Գյումուշխանանից և այլն<sup>21</sup>.

Այսուամենայնպիս, շնայած բոլոր հետապնդումներին ու ննծ տուրքերին, պատրիարքարանը կարողացավ խոշոր դեր խաղալ արևմտահայերի քաղաքական ու մշակութային կյանքում, հաճախ հանդիս զարով որպես հայերի միակ պաշտպանն ըմբշեմ տպանական տերության կողմից հետևողականորեն շարտնակվող կանոյականությունների ու բօնությունների: Է Պոլսի հայ պատրիարքարանի գոյուրյունը վկայում էր ոչ միայն մայրաքաղաքում, այն ողջ կայսրությունում հայ համայնքի ազդեցության մասին: Իրան մեծասրբ նպաստում էր հայ համայնքի տնտեսապես ակտիվացումը՝ հայերի գործունեությունը որպես առևտականներ, արհետավայրներ, քամունենք:

Հայտնի է, որ 17-րդ դարից Թուրքիայի արտաքին և ներքին առևտուր գոնսում էր հիմնականում հայերի և հոյների ծերում: «Հայերը», զբան է Սուրաղան՝ Դ Օսմանը, շատ համայս նն իրենց

<sup>20</sup> Սյունիք, էջ 55.

<sup>21</sup> Խանքանամ Ռ. Այսուբեկովովին, հ. 5, էջ. 117.

Ավերում առևտրին. Հենց նրանք և ոչ թե նահնելեկաններն են հանդիսանում հարուստ քարականների կազմակերպիչները. Առևտրի հայերն ուղևորվում են Սահայի տարբեր շրջանները, որտեսակ տարածեն այնտեղ աշխարհի յորս կողմերի ապրանքները<sup>22</sup>: Հայերն իրենց առևտուրն իրականացնում են շափազանց ծանր պայմաններում, քանի որ «Թուրքիան յեցու եր ավագակներով, որոնք մեծ խճերով քափառենք ճանապարհներին տպառում են Վաճառականներին: Երբ նրանք հանդիսում են հարուստ վաճառականների, ապա թալանում են նրանց ու շատ հաճախ սպամում», - վկայում է Ժ.Տավերնեին<sup>23</sup>: Դեռևս 18-րդ դարում հայ վաճառականների ճավագո խարիսխ էին գցում մի կողմից Եվրոպայի ափերին, իսկ մյուս կողմից հասնում էին մինչև Հնդկաստան: Ն. Բնօրենյանը գրում է, որ Եվրոպայում ձեզ բերված հիմնական ապրանքները դրանք Ռուսաստանի մորթիներն ու մուշտակներն էին, որոնք տարեկան հեկայական շահ էին ապահովում: «Իրանց փոխարևն վաճառականները տալիս էին ոչ միայն իրենց ապրանքը, այլև փոխում մարգարիտի հետ: Անգլիայից ու Գերմանիայից գնում էին մանուշ, մնտաղի իրեր, արհեստագործական առարկաներ: Ֆրանսիացիր հայազգի պատմարան, ոլխանազեր Մերացա Դ-Շարժի վկայությանը համաշխարհային պատճենազմից առաջ, Ֆրանսիայի հետ նրանց առևտուրը գերազանցում էր մյուս երկների հետ առևտրին, որունից բերում էին մահույ ուկի, արծար, ուկերել ու արծարերեկներ հագուստնենն կարելու համար, ժապավեններ ու նորոք գործվածքներ, իրան երկարից և այլն...»<sup>24</sup>

Օտար երկրների հետ առևտուրը լոկ տնտեսական բնույթ ձեր կրուն Գործի բերումով վաճառականներին աներածեցու օտար լեզուների համարությունը, բնական խեցը և փորձը անկանոնած նական դեր են խաղացել Օսմանյան կայությունում և վոլուսական կացորսութեան ու վերոպական մտածեակերպի ներքանանցման գործում: Նրանք ժամանակից առաջատար զարգախանների կողմներն են համաշխատել և մատչել են դարձրել հարեւան երկների արդյունաբերության, զյուղատնտեսության, գիտության ու նշակույրի առաջընթացի ներքանանցումը:

<sup>22</sup> D'Օստոն Մ. Տեհրու Օտոռու ծուռու Փլուրու Օտոռու, Փար 1790, V.4, թ.204.

<sup>23</sup> Հայ ժողովով պատճերված, հ.4, լ.2 291.

<sup>24</sup> Տաքուան Ն. Աշխարհագրություն, հ.5, լ.5.

Այս ամենը չկ կարող իր ազդեցությունը շտմնենալ հետամնաց Օսմանյան կայսրության կյանքի վրա: Թուրք պետության մեջ հայերի ծառայություններին և նվիրված բուրք ուսումնաժողովի աշխատությունը<sup>25</sup>:

Եթե առևտուրը, դիվանագիտական ծառայությունը որոշ հայերի մնաշշորին էր, ապա մնացած հայերի մեծ մասը արիեւուններով էին զրադվում: Սա պատահական հանգամանք չի, քանի որ ինչպես մշում է բուղար գիտնական և Թուրքություն, մինչև 18-րդ դարի վերջը «տիրապետող ժողովուրդը գտնվում էր արտապլող տօների ընդհանուր զարգացման շրջանակներից դուրս և այս համագամանը իր դրոշմն է բռնի Օսմանյան կայսրության ողջ ստցիկ քաղաքական կյանքի վրա»<sup>26</sup>: Հայերը կարևոր տեղ էին զրադեցնում արիեւունների ու առևտուրի մեջ: Նրանք մասնաւորություններ, մետաքառորդներ, ուսերիյններ, շրարշագործներ, դաշնագործներ, բրդագործներ, մամուֆակտորյայի նանք վաճառականներ, գուլպայագործներ, ծամագործներ, դիրքակներ, նորբերդներ, դարբիններ և այլն, - գրում է պրուսայ բանասեր Հարություն Միքրյանը<sup>27</sup>: Յուրաքանչյուր արիեւուններկայանում էր իր արիեւուններով՝ Էսմահեմ Միայն Կ.Պոլսում գործում էին 65 Խանաձներ: Այս արիեւուններին պես է ավելացնել նույն Մրանց, ուրեք զրադված էին շրկաններում, խաներում: Այն է հացրույնները, գիմենորդները, փորազդիչները, քարանագործները, շրուհակները, պունք բուրդ, մնտարս ու գործվածք էին ծավալու, զիսարկագործները, փականագործները, ծևարարները: Հարկ է բնարկել նաև զրավաճառներին, զրաքիրմերին, վարսալիրներին, բանեազաններին, դեղագործներին, թիշկեններին, խոհարարներին, հնավաճառներին, կոչկակարներին, ներկարարներին, արդյունողներին, պանդոկատերին, կլայշեկողներին, բրուտներին, ուկեկարող դիրքակներին և այլոց<sup>28</sup>: 19-րդ դարից արիեւունական միուրյուններն ավելի ակտիվորեն լուսացն ազգային ինքնավարության գործերին:

25 Çank Y.G. Türk Devleti Hâzırınlığı Ermeniler 1453-1953. İstanbul, 1953, s. 135-145.

26 Τοάρδος Η. Βαλκανίκης πόροι ΧV-ΧIX αιώνων. Μ., 1976, σ. 410.

27 Մյօքանձ և Թուրքակաց կյց Գանձաւականություն և Գանձաւականություն. Կ.Պոլսու, 1910, 19-17.

28 Պարտ Խառըհանք, Փանուարագործուն, թ 337-338 և էջ 554-555 (ան Հայուրան Վ.Ա. Մանց Խառնարագործունը թ 13-18-րդ դր. թ 9, հ. 2, 1956), յեղան Առ. Մանուկյանը, թ ա. 10069, էջ 418: Տե՛ Զե՛ Առ Արքակայան Վ.Ա. Առենանը Ծայրականը, թ 1956, էջ 252: 28

